

Հավելված N1
ՀՀ կառավարության 2019 թվականի
սեպտեմբերի 26-ի N 1323 - Լ որոշման

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆ.....	3
2. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ.....	3
3. ՆԱԽԱԲԱՆ.....	4
4. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
5. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	8
6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ.....	9
7. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ.....	18
8. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ.....	255
9. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	321

1. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. Կարգավորման ազդեցության գնահատման ապակենտրոնացված համակարգի ներդրման հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ) մշակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կողմից:

2. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Հայեցակարգը բաղկացած է ինը բաժիններից: Հայեցակարգում ներկայացվում են կարգավորման ազդեցության գնահատման (այսուհետ՝ ԿԱԳ) էությունը, ԿԱԳ-ի նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում, հայեցակարգի նպատակը և խնդիրները, լավագույն ԿԱԳ-ի համակարգեր ունեցող միջազգային փորձի ուսումնասիրությունը, Հայաստանի Հանրապետությունում ԿԱԳ-ի ապակենտրոնացված համակարգի ներդրման քաղաքականության մշակման հիմնավորվածությունն ու անհրաժեշտությունը, ինչպես նաև առաջարկվող մոդելը:

3. Փաստաթղթում անդրադարձ է կատարվել նաև ԿԱԳ-ի վերլուծության մեթոդական շրջանակին, որում սահմանվել են ԿԱԳ-ի վերլուծության ենթակա խնդրի հասկացությունն ու էությունը, նպատակների, կարգավորիչ և ոչ կարգավորիչ գործիքների ու խնդրի լուծմանն ուղղված տարբերակների սահմանման սկզբունքները, ազդեցությունների, այդ թվում՝ կարգավորմամբ պայմանավորված ծախսերի և օգուտների էությունն ու հիմնական տեսակները, ինչպես նաև տրվել են տարբերակների համադրման մեթոդները և մատնանշվել է հանրային քննարկումների ու հետագա մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությունը:

3. ՆԱԽԱԲԱՆ

4. Հայաստանում ԿԱԳ-ի իրավական հիմքը դրվել է դեռևս 2008 թվականին՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելով իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման աշխատանքների իրականացման պարտադիր պահանջի սահմանմամբ: Սույն դրույթի գործողությունն իրավական ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից և գործել է մինչև 2018 թվականի ապրիլի 7-ը: Այսպիսով, Հայաստանում ազդեցության գնահատում իրականացվում էր միայն օրենքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության տարեկան ծրագրով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ՝ 7 ոլորտներում 6 նախարարությունների կողմից: Երկրում գործում էր ազդեցության գնահատման իրականացման ապակենտրոնացված համակարգ, որի պայմաններում իրավական ակտի նախագիծը նախապատրաստող մարմինը կազմակերպում էր նախագծի ազդեցության գնահատումը: Նշված ոլորտներում պատասխանատու մարմինները (Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն), իրավական ակտի նախագիծն ստանալու պահից 15-օրյա ժամկետում, իրականացնում էին ազդեցության գնահատում իրենց ոլորտներում և դրա վերաբերյալ ազդեցության գնահատման

եզրակացությունը ներկայացնում էին իրավական ակտի նախագիծը նախապատրաստող մարմինին:

Այնուամենայնիվ, համաձայն երկրում գործող պրակտիկայի՝ կարգավորման ազդեցության համապարփակ գնահատում չէր իրականացվում, և արդյունքում ստացվում էր, որ հիմնականում նախագիծը մշակող մարմինն ազդեցության գնահատողից ստանում և իր նախագծին պարտադիր կցում էր ազդեցության գնահատման եզրակացությունը: Արդյունքում, ինչպես ցույց տվեց փորձը, նշված մարմինների կողմից տրված ազդեցության գնահատումները պարունակում էին զուտ ընդհանրական եզրակացություններ: Նշված եզրակացությունները կցվում էին «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ԿԱԳ-ի ենթակա բոլոր իրավական ակտերի նախագծերին (պարտադիր պահանջ)՝ առանց հաշվի առնելու նախագծի/խնդրի մեծությունը, հրատապությունը կամ առաջնահերթությունը. հաշվի չէր առնվում այն հանգամանքը՝ արդյոք տվյալ նախագիծը պարունակում է կարգավորիչ նորմեր, թե ոչ, ինչպես նաև չէր հաշվարկվում տվյալ նախագծի ընդունման արդյունքում առաջացող վարչարարական բեռը, իսկ դա հնարավորություն չէր տալիս նախագիծը մշակողին և ազդեցությունը գնահատողին ապահովելու որակյալ և հիմնավորված ԿԱԳ-ի վերլուծություն՝ թե՛ տրամադրվող ԿԱԳ-երի թվաքանակից և թե՛ ժամանակի ու ռեսուրսների սղությունից ելնելով:

5. Հայաստանի Հանրապետությունում, «Կարգավորիչ բարեփոխումների» ծրագրի շրջանակներում, 2015-2019 թվականներին ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ԿԱ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ» ՊԸ-ն, իսկ այնուհետև՝ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամն իրականացրել են ԿԱԳ-ի մեթոդաբանության միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, կենտրոնացված ԿԱԳ համակարգի շրջանակներում մշակել

են փորձարարական ԿԱԳ-ի իրականացման կարգն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև իրականացրել տարբեր ոլորտներին առնչվող մի շարք փորձարարական ԿԱԳ-ի վերլուծություններ: Սակայն, կենտրոնացված համակարգի թերությունը կայանում էր նրանում, որ ԿԱԳ-ի վերլուծությունն իրականացվում էր արդեն իսկ պատրաստի նախագծի հիման վրա, այլ ոչ թե՛ մինչև դրա մշակումը, ինչը հակասում էր ԿԱԳ-ի էությանը: Մինևույն ժամանակ ԿԱԳ-ի վերլուծություն իրականացնող կենտրոնական մարմնից պահանջվում էին էական ժամանակային և մարդկային ռեսուրսներ ԿԱԳ-ի վերլուծության խնդիրը և տվյալ ոլորտի առանձնահատկությունները խորությամբ վերլուծելու համար:

6. 2018 թվականի մարտի 21-ին ընդունվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՕ-180-Ն օրենքը, որի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Ըստ բնագավառների՝ կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը»: Ներկայումս վերը նշված օրենքից բխող ԿԱԳ-ի իրականացման կարգ, ժամկետներ և դեպքեր, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջներ դեռևս սահմանված չեն:

4. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

7. **ԿԱԳ-ը** իրավաստեղծ մարմնի կողմից ընդունվող որոշումների արդյունավետությունը հիմնավորող գործիք է: Այն համակարգային մոտեցում է վերլուծաբար գնահատելու խնդիրների լուծման համար առաջարկվող և (կամ) արդեն իսկ գործող կարգավորումների, ինչպես նաև ոչ կարգավորիչ այլընտրանքների դրական և բացասական ազդեցությունները հասարակական կյանքի, տնտեսության այս կամ այն ոլորտների վրա: ԿԱԳ-ը հանդիսանում է ապացույցների վրա հիմնված

քաղաքականության մշակման կարևորագույն տարրերից մեկը, երկրում կարգավորիչ բարեփոխումների իրականացման հիմնական և բաղկացուցիչ մասը, քանի որ ԿԱԳ համակարգի ներդրումն անհրաժեշտ պայման է երկրում փաստերի և վերլուծությունների վրա հիմնված արդյունավետ, որակյալ և թափանցիկ որոշումների ընդունման, ինչպես նաև որոշում կայացնողների հաշվետվողականության բարձրացման համար: ԿԱԳ-ը հնարավորություն է տալիս նախապես հասկանալ այդ որոշումների ազդեցությունը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում՝ ընդհանուր տնտեսության և դրա առանձին ուղղությունների վրա:

8. ԿԱԳ-ի նպատակը, վերլուծության ենթակա խնդրի լուծման համար հնարավոր տարբերակների մշակման, դրանց ծախսերի ու օգուտների հաշվարկման, ազդեցությունների գնահատման և համադրման արդյունքում, խնդրի կարգավորման առավել արդյունավետ տարբերակի առաջադրումն է:

9. ԿԱԳ-ը առանցքային նշանակություն ունի որոշումների կայացման գործընթացի բարելավման և դրա արդյունավետության բարձրացման գործում, մասնավորապես՝

- բարձրացնում է կայացվող որոշումների որակը՝ տեղափոխելով շեշտադրումը ենթադրական մոտեցումներից դեպի ապացուցողական մոտեցումներ. որոշումների կայացումն իրականացվում է տվյալներով հիմնավորված փաստերի հիման վրա,

- օգնում է հասկանալ իրավաստեղծ մարմնի կողմից ձեռնարկվող գործողությունների իրական ազդեցությունը, գնահատել տվյալ կարգավորիչ միջամտության անհրաժեշտությունն ու արդյունավետությունը,

- ապահովում է շահառուների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում, բարձրացնում այդ գործընթացի թափանցիկությունն ու որոշում կայացնողների հաշվետվողականությունը:

10. ԿԱԳ-ի առանցքային հարցերի շրջանակը պետք է ներառի՝

- ո՞րն է խնդիրը, որը ցանկանում ենք լուծել,
- ինչու՞ է պետության միջամտությունն անհրաժեշտ,
- լուծման ի՞նչ տարբերակներ են դիտարկվել,
- ովքե՞ր են շահառուները, ու՞մ հետ և ի՞նչ քննարկումներ են իրականացվել,
- ո՞րն է լավագույն տարբերակն առաջարկվող լուծումներից,
- **ինչպե՞ս պետք է կյանքի կոչվի և գնահատվի ընտրված տարբերակը:**

11. Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ երկրները այս կամ այն ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման հիմքում դնում են խնդրի լուծման ԿԱԳ-ը, քանի որ վերջինս հանդիսանում է ապացույցների վրա հիմնված քաղաքականության մշակման կարևորագույն բաղադրատարր:

5. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Կարգավորման որակի տեսանկյունից՝ Հայաստանի Հանրապետությունում մարտահրավերները կապված են իրավական ակտերի ազդեցության գնահատման համակարգված գործընթացի բացակայության հետ: Քաղաքականության մշակման գործընթացում չի իրականացվում բազմակողմանի համապարփակ վերլուծություն, հաճախ չեն տրվում կարգավորման ազդեցության քանակական գնահատականներ, փոխարենը նախագծի հիմքում հաճախ դրվում է որակական վերլուծություն, սահմանված չեն կարգավորման որակի գնահատման հստակ չափորոշիչներ և, վերջապես, քաղաքականության մշակման գործընթացում հանրության մասնակցությանը տրվում է փոքր արժեք: Նշված հիմնախնդիրների առկայության հետևանքով էլ անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու հաճախակի փոփոխություններ գործող իրավական ակտերում, ընդունելու մեծ քանակությամբ նոր կարգավորումներ՝ օրենսդրական բացերը լրացնելու նպատակով: Նմանօրինակ հիմնախնդիրներին է ուղղված ԿԱԳ-ի մեթոդաբանության կիրառությունը՝ որպես որակյալ

իրավական ակտերի մշակման գործիք: Համապարփակ ԿԱԳ-ը ենթադրում է խնդրի վերհանում, սահմանում և հիմնավորում փաստերով, խնդրի պատճառահետևանքային կապի բացահայտում, նպատակների սահմանում, խնդրի պատճառների կամ պատճառներից բխող հետևանքների վերացմանն ուղղված տարբերակների սահմանում, վերջիններիս ազդեցության որակական և քանակական գնահատում ու համադրման արդյունքում նախընտրելի տարբերակի ընտրություն: Ուստի ԿԱԳ-ի համապարփակ համակարգի ներդրումը մեր երկրում թույլ կտա բարելավել որոշումների կայացման գործընթացը, սահմանել իրավական ակտերի մշակման առավել խիստ պահանջներ և որոշումների կայացման կանոնակարգված մոտեցումներ՝ հիմնավորված փաստերով և ծախս-օգուտ հաշվարկներով, նվազեցնել օրենսդրական ձախողումների ի հայտ գալու հավանականությունը և երկրում զարգացնել կարգավորման հաշվետվողականության համակարգ ու որոշումների ընդունման թափանցիկություն:

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

13. Ֆինլանդիա

1) Ֆինլանդիայում ԿԱԳ-ի համակարգը¹ կարգավորման նախագծման անբաժանելի մաս է կազմում և իրականացվում է անմիջապես քաղաքականությունը մշակող պետական մարմնի կողմից: 2015 թվականից սկսած Ֆինլանդիայի կառավարության ներքո ստեղծվել է Կարգավորման ազդեցության գնահատման խորհուրդ, որն առանցքային դեր ունի բարեփոխումների իրականացման գործընթացում և վերահսկում է ԿԱԳ-ի որակը.


2) Ֆինլանդիայում քաղաքականության մշակման փուլերը կարելի է ներկայացնել հետևյալ քայլերի տեսքով՝

¹ Աղբյուրը՝ <https://vnk.fi/en/council-of-regulatory-impact-analysis>, <https://vnk.fi/en/frontpage>, <http://lainvalmistelu.finlex.fi/en/aloite/>:

- նախաձեռնության փուլ, որի ժամանակ դիտարկվում է կարգավորման մշակման անհրաժեշտությունը,
- նախնական պատրաստություն, որի ժամանակ քննարկվում է՝ արդյո՞ք մշակումը պետք է տեղի ունենա որևէ նախարարության կողմից, թե՛ անհրաժեշտ է ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ,
- նախագծի մշակում,
- հանրային քննարկումներ,
- նախագծի մշակման շարունակություն՝ հիմք ընդունելով ստացված արձագանքները,
- կառավարության կողմից նախագծի քննարկում,
- օրենսդրի կողմից նախագծի քննարկում.

3) Ֆինլանդիայում ԿԱԳ-ի ենթակա են բոլոր օրենքները² և որոշ ենթաօրենսդրական կարգավորումներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն:

Գծապատկեր 1.



14. Իտալիա

1) Իտալիայում ԿԱԳ-ը պահանջվում է³ իրականացնել բոլոր նախարարությունների և տեղական մարմինների կողմից: ԿԱԳ-ն իրականացնում է քաղաքականության


² Առաջնային են այն օրենքները, որոնք պետք է ընդունվեն օրենսդրի կողմից, երկրորդային է կոչվում կարգավորման այն տեսակը, որ կարող է ընդունվել կառավարության, նախարարության կամ այլ մարմնի մակարդակով:

³ Աղբյուրը՝ https://www.sgi-network.org/2018/Italy/Executive_Capacity, <https://www.normattiva.it/>:

մշակողը, իսկ որակի վերահսկողությունը և աշխատանքների համակարգումն իրականացնում է Նախարարների խորհրդի դատաիրավական և օրենսդրական հարցերով վարչությունը (ԴՕՀՎ), որը պատասխանատու է նաև ԿԱԳ-ի մեթոդաբանության մշակման համար: Իտալիայում ներկայումս, համաձայն օրենքի պահանջի, արգելված է Նախարարական խորհրդի կողմից նախագծի դիտարկումը, եթե բացակայում է ԿԱԳ-ի փաթեթը: ԴՕՀՎ-ին վերահսկողության պատշաճ իրականացման հարցում աջակցում է Ազդեցության գնահատման անկախ մարմինը, որն անկախ փորձագետների խումբ է, որոնք աշխատում են 4 տարի՝ պայմանագրային հիմունքներով, և ընտրվում են մրցութային կարգով: Բոլոր այն ենթաօրենսդրական կարգավորումների համար, որոնք ենթակա չեն ԿԱԳ-ի փոքր ազդեցություն ունենալու պատճառով, մշակող մարմինն իրականացնում է պարզեցված գնահատում և ներկայացնում է ԴՕՀՎ:

2) Իտալիայում քաղաքականության մշակման փուլերը կարելի է ներկայացնել հետևյալ քայլերի տեսքով՝

Գծապատկեր 2.



3) Իտալիայում ԿԱԳ-ի ենթակա են բոլոր առաջնային օրենքները⁴, և որոշ երկրորդային կարգավորումներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն:

⁴ Առաջնային են այն օրենքները, որոնք պետք է ընդունվեն օրենսդիրի կողմից, երկրորդային է կոչվում կարգավորման այն տեսակը, որ կարող է ընդունվել կառավարության, նախարարության կամ այլ մարմնի մակարդակով:

15. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

1) ԱՄՆ-ում ԿԱԳ-ի իրականացման պահանջը ամրագրված է օրենքով: ԿԱԳ-ը իրականացնում են բոլոր դաշնային կառավարման մարմինները՝ բացառությամբ Դաշնային ընտրական հանձնաժողովի, Դաշնային վերահսկիչ պալատի և կառավարության պայմանագրային գործառույթներով զբաղվող մարմինների:

2) ԿԱԳ-ի վերահսկողական մարմինը հանդիսանում է Տեղեկատվության և կարգավորման հարցերի գրասենյակը (ՏԿՀ): Այն ԱՄՆ-ի կառավարության ենթաստորաբաժանում է, որը գործում է ԱՄՆ-ի նախագահի գործադիր գրասենյակի Կառավարման և բյուջեի գրասենյակի ներքո: Այս կառույցը համարվում է կարգավորումների պլանավորման և վերանայման կենտրոնացված մարմին, որն այդ թվում նաև՝ իրականացնում է ԿԱԳ-ի համակարգում:

3) ԿԱԳ-ն իրականացվում է 2 փուլով՝ նախնական փուլում որոշվում է ԿԱԳ-ի նպատակահարմարությունը, այսինքն՝ ԿԱԳ-ի վերլուծություն իրականացնելու կամ չիրականացնելու խնդիրը: Ոչ նշանակալի ազդեցություն ունեցող ակտերն ուղղակի չեն ենթարկվում ԿԱԳ-ի, իսկ տնտեսության վրա նշանակալի ազդեցություն ունեցող ակտերի մասով, իրականացվում են հատուկ խորացված վերլուծություններ: ԱՄՆ-ում լայնամասշտաբ քննարկումներից հետո, 2018 թվականից սկսած, ԿԱԳ-ի վերլուծություն է կիրառվում նաև հարկային կարգավորումներ պարունակող իրավական ակտերի մասով:

16. Կանադա

1) Կանադայում ԿԱԳ-ը պարտադիր է միայն ենթաօրենսդրական ակտերի համար: Յուրաքանչյուր իրավասու մարմին ինքն է պատասխանատու իր առաջարկների ԿԱԳ իրականացնելու համար: Կանադայի Գանձապետական խորհրդի քարտու-

դարությունը վերահսկում է ենթաօրենսդրական կարգավորումների և ԿԱԳ-ի որակը. ունի այն վերանայելու և վիճարկելու գործառույթ⁵.

2) Կանադայում ենթաօրենսդրական ակտերի ընդունման փուլերն են՝

- խնդրի պատճառների, հրատապության, ռիսկերի, ազդեցությունների վերաբերյալ վերլուծություն, պետական միջամտության անհրաժեշտության հիմնավորում՝ առկա փաստերի և կատարված վերլուծության հիման վրա,

- նախնական քննարկումներ շահառուների հետ՝ նախքան կարգավորման գործընթացն սկսելու վերաբերյալ որոշում կայացնելը,

- խնդրի լուծման այլընտրանքային գործիքների ուսումնասիրություն, դրանց ծախսերի հաշվարկ, կատարված ընտրության հիմնավորում,

- կարգավորման ազդեցությունների գնահատում,

- իրավական ակտի նախագծի, ԿԱԳ-ի փաթեթի հրապարակում,

- հանրային քննարկումներ,

- իրավական ակտի ընդունում,

- իրավական ակտի, ինչպես նաև ԿԱԳ-ի փաթեթի պաշտոնական հրապարակում:

17. Ավստրալիա


1) Ավստրալիայում ԿԱԳ-ն իրականացվում է բոլոր այն նախագծերի համար, որոնք պետք է ներկայացվեն կառավարության Նախարարական խորհուրդ⁶: ԿԱԳ-ի ենթակա են նաև այն նախագծերը, որոնք ընդունվում են ոչ Նախարարական խորհրդի մակարդակով, սակայն ունեն նշանակալի ազդեցություն բիզնեսի, համայնքային կազմակերպությունների կամ անհատների վրա.

⁵Աղբյուրը՝ <https://www.canada.ca/en/treasury-board-secretariat/services/federal-regulatory-management/guidelines-tools/cabinet-directive-regulatory-management.html>:

⁶Աղբյուրը՝ <https://www.pmc.gov.au/regulation>, <https://ris.pmc.gov.au/>, <https://www.treasury.wa.gov.au/Economic-Policy/RIA-Program/>:

2) Ավստրալիայում ԿԱԳ-ն իրականացնում է նախագիծը մշակող մարմինը՝ նախքան նախագծի մշակումը: Վերջինս, ներգրավելով շահագրգիռ կողմերին մշակում է նախնական ԿԱԳ, ինչն այնուհետ ներկայացվում է Կարգավորման լավագույն փորձի գրասենյակ (ԿԼՓԳ): ԿԼՓԳ-ն Ավստրալիայի ԿԱԳ-ի վերահսկողություն իրականացնող կենտրոնացված մարմին է, որը գործում է վարչապետի աշխատակազմի ներքո, և որը վերահսկում է, թե որքանով է ԿԱԳ-ի գործընթացը համապատասխանում սահմանված պահանջներին: ԿԼՓԳ-ն նախնական ԿԱԳ-ը ստալանուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է իրականացնող մարմին նախնական ԿԱԳ-ի համապատասխանության վերաբերյալ իրենց արձագանքը՝ նշելով, թե որ տեսակի ԿԱԳ պետք է իրականացնի նախագիծը մշակող մարմինը՝ երկար, ստանդարտ, թե կարճ:

Գծապատկեր 3.



18. Ծանոթագրություն

Ընդհանրապես ԿԱԳ-ի վերլուծությունների իրականացումը ռետուրսատար գործընթաց է: Այդ իսկ պատճառով միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ նախապես սահմանվում են չափանիշներ և չափորոշիչներ, որոնց դեպքում իրականացվում է կարգավորում նախատեսող նորմերի ԿԱԳ-ի վերլուծություն:

ԿԱԳ չափորոշիչների սահմանման մոտեցումներից է **«թիրախավորման»** սկզբունքը, որը ենթադրում է ԿԱԳ-ի ենթակա իրավական ակտերի որոշում կամ ֆիլտրում՝ ազդեցության նախնական գնահատման միջոցով:

Ավստրալիայի փորձը հատկանշական է նախնական գնահատման լավ մշակված կառուցվածքի տեսանկյունից: Ֆիլտրող մեխանիզմ է **«տրիաժ» կամ «դասակարգում»** կոչվող սկզբունքը, որով որոշվում է իրավական ակտի նախագծով առաջարկվող կարգավորման ազդեցության վերլուծության տեսակը և խորությունը: Այս նպատակով մշակվում են հատուկ հարցաշարեր (ամփոփաթերթեր), որոնց պատասխանելով իրավական ակտեր մշակող մարմինը որոշում է նախատեսվող կարգավորման ազդեցությունները՝ դասակարգելով դրանք **ցածր, միջին և բարձր կարգի ազդեցությունների**, ըստ որոնց որոշվում է իրականացվող ԿԱԳ-ի տեսակը՝ **պարզեցված (ոչ խորացված) կամ ամբողջական (խորացված) ԿԱԳ**, որոնց դեպքում տարբերվում է վերլուծության բնույթը և խորությունը: Նման սկզբունքով ԿԱԳ են կիրառում նաև Կանադայում¹ և Մեքսիկայում:

Մեկ այլ մոտեցում է կարգավորման ազդեցության **նվազագույն շեմի կամ միջակայքի սահմանումը** խորացված կամ պարզեցված ԿԱԳ իրականացնելու համար: Օրինակ՝ ԱՄՆ-ում ԿԱԳ-ի նպատակահարմարությունը որոշվում է նախագծի՝ իրավական ակտը մշակող մարմնի կողմից նախնական գնահատման միջոցով՝ որակավորելով այն **«նշանակալի»** կամ **«ոչ նշանակալի»**: Ընդ որում, նշանակալի է համարվում, եթե ներկայացվող իրավական ակտի նախագիծը պարունակում է նորմեր, որոնք հնարավոր է ունենան տարեկան 100 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք և ավելի ազդեցություն կամ բացասական նյութական ազդեցություն տնտեսության վրա՝ տնտեսության, տնտեսական որևէ ոլորտի, արտադրողականության, մրցունակության, աշխատատեղերի, բնապահպանության վրա և այլն:

Տարբեր երկրներում տարբեր շեմեր են սահմանվում ազդեցությունների տեսանկյունից: Ավստրալիայում սահմանվում են կարգավորման ծախսերի նվազագույն և առավելագույն շեմեր¹ (100,000- 2,000,000 ավստրալիական դոլար). նշված միջակայքից վերև գտնվելու դեպքում առաջարկվում է ԿԱԳ-ի համապատասխան տեսակ: Կարգավորման ծախսեր են համարվում վարչական, համապատասխանության և ուշացման ծախսերը: Մեծ Բրիտանիայում այդ շեմը 5 մլն ֆունտն է: Կանադայում, եթե կանխատեսվող ծախսերը չեն գերազանցում տարեկան 1 մլն կանադական դոլարը (10 տարվա ընթացքում 10 մլն կանադական դոլարի ներկա արժեքը), առաջարկը համարվում է ծախսերի ցածր ազդեցություն ունեցող:

19. ԿԱԳ-ի Կենտրոնական վերահսկող մարմինները

1) Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ ԿԱԳ-ն իրականացնում է անմիջապես քաղաքականության/իրավական ակտի մշակողը, իսկ որակի վերահսկողությունն ապահովում է կենտրոնական վերահսկող մարմինը.

2) **Ավստրալիայում** կարգավորման կենտրոնական մարմին է հանդիսանում Կարգավորման լավագույն փորձի գրասենյակը (ԿԼՓԳ): Ավստրալիայի ԿԱԳ-ի վերահսկող կենտրոնացված մարմինը գործում է վարչապետի աշխատակազմի ներքո և վերահսկում է, թե որքանով է ԿԱԳ-ի գործընթացը համապատասխանում սահմանված չափանիշներին և չափորոշիչներին: Այն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- գնահատում է իրականացված վերլուծությունների ճշգրտությունը,
- կայացնում է որոշում նախագծերի ԿԱԳ-ի ենթակա լինելու և տեսակի վերաբերյալ,
- գնահատում է կարգավորման ազդեցության ծախսերը և ծախս-օգուտ հաշվարկները,
- տալիս է խորհրդատվություն ծախսերի հաշվարկման վերաբերյալ,
- հայտնաբերում է կարգավորիչ տարբերակների հավանական բացերը,
- տալիս է խորհրդատվություն կարգավորման լավագույն փորձի վերաբերյալ,
- անցկացնում է դասընթացներ և կազմում ուղեցույցներ ԿԱԳ-ի վերաբերյալ,
- հանդես է գալիս կարգավորիչ բարեփոխումների առաջարկներով,
- վարում է միասնական էլեկտրոնային ԿԱԳ-ի ռեեստրը:

3) **Կանադայում** ԿԱԳ-ի Կենտրոնական մարմին է համարվում Կանադայի գանձապետական խորհրդի քարտուղարությունը, որը, ի թիվս իր այլ գործառույթների, վերահսկում է ենթաօրենսդրական կարգավորումները և ԿԱԳ-ի որակն ապահովելու նպատակով ունի այն վերանայելու և վիճարկելու գործառույթ: Վերահսկող մարմնի գործառույթներն են՝

- նորմատիվ առաջարկների մշակման վերաբերյալ համապատասխան մարմիններին խորհրդատվության տրամադրում և ձեռնարկների կազմում,
- նորմատիվ առաջարկների ուսումնասիրություն և առաջարկը ներկայացնող կարգավորող մարմինների կողմից իրականացված վերլուծության որակի վիճարկում,
- կարգավորումների լավագույն փորձի վերաբերյալ փորձագիտական վերլուծությունների տրամադրում,
- նոր առաջարկների, գործող քաղաքականության և կառավարության քաղաքական օրակարգի միասնականության ապահովում և այլն.

4) **Մեծ Բրիտանիայում** գործում է Կարգավորման քաղաքականության հանձնաժողովը⁷ (այսուհետ՝ հանձնաժողով), որն անկախ խորհրդատվական մարմին է:

Հանձնաժողովը կազմված է տարբեր բնագավառների 9 անկախ փորձագետներից, ովքեր ունեն բիզնեսի, աշխատողների, սպառողների և տնտեսական հիմնախնդիրներին առնչվող փորձ և գիտելիքներ, նշանակվում են մրցութային կարգով: Հանձնաժողովի աշխատանքներին աջակցում է քաղաքացիական ծառայողներից, տնտեսագետներից և քաղաքականության խորհրդատուներից կազմված քարտուղարությունը: Յուրաքանչյուր ԿԱԳ-ի վերլուծություն մակագրվում է հանձնաժողովի անդամներից մեկին, որին կցվում են քարտուղարության առնվազն երկու աշխատող (տնտեսագետ և քաղաքականության մասնագետ):

Հանձնաժողովի հիմնական նպատակն է կարգավորող առաջարկությունների ազդեցության վերաբերյալ ներկայացված ապացույցների և վերլուծության որակի գնահատումը՝ հավաստիանալու համար, որ նախարարությունների քաղաքական որոշումները հիմնված են որակյալ և համապարփակ վերլուծության, ինչպես նաև ճշգրիտ փաստերի վրա:


⁷ Աղբյուրը՝ <https://www.gov.uk/government/organisations/regulatory-policy-committee/about>:

Հանձնաժողովն իր կողմից ուսումնասիրված յուրաքանչյուր ԿԱԳ-ի վերաբերյալ տալիս է կարծիք: Կարծիքում նշվում է, արդյոք ԿԱԳ-ը ծառայում է նպատակին/համապատասխանում է նպատակին, ինչպես նաև հավաստի են արդյոք կատարված հաշվարկները:

7. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

20. ԿԱԳ-ի վերլուծական գործընթացի ընթացքում քննարկվող հարցերը գրեթե միանման են ԿԱԳ կիրառող երկրների կողմից ընդունված մեթոդոլոգիաներում (ձեռնարկներում): Վերլուծությունն սկսվում է խնդրի որոշումից, որի հիման վրա սահմանվում են նպատակները: Հաջորդ փուլում առաջարկվում են խնդիրը լուծելու և նպատակներին հասնելու տարբերակներ, քննարկվում են տարբերակների ազդեցությունները և ընտրվում է լավագույնը: ԿԱԳ-ը կարող է ներառել նաև իրավական ակտի ընդունման և ուժի մեջ մտնելուց հետո նախատեսվող մոնիթորինգի և գնահատման միջոցառումներ: ԿԱԳ-ի գործընթացի առանցքում են գտնվում տվյալների հավաքագրումը և հանրային քննարկումները:

Գծապատկեր 4.



21. Խնդրի որոշում և սահմանում

1) Խնդրի ճիշտ ընկալումն ու սահմանումը ԿԱԳ-ի շրջանակներում իրականացվող վերլուծական աշխատանքի մեկնարկային կետն է: Խնդրի ճիշտ սահմանումը և դրա պատճառների վերաբերյալ հստակ պատկերացումները հանդիսանում են համապատասխան նպատակներ դնելու և խնդրի լուծման տարբերակների բացահայտման նախադրյալներ: Միայն խնդրի ճիշտ սահմանման դեպքում է հնարավոր առաջարկել համապատասխան լուծումները և ընտրել նպատակին հասնելու համար լավագույն տարբերակը: Խնդրի լավ սահմանումը պետք է նկարագրի խնդրի բնույթը և մասշտաբը, հստակ սահմանի խնդրի հիմնական պատճառները և հետևանքները, վերհանի խնդրից ազդեցության ենթարկվողներին:

2) այս փուլում պետք է ներկայացվի նաև խնդրի ակնկալվող զարգացման ամփոփ նկարագրությունը՝ հիմք ընդունելով միջամտող գործոնների մասին հիմնավորված ենթադրությունները: Սա հայտնի է որպես Ելակետային սցենար և օգտագործվում է որպես ելակետ՝ ԿԱԳ-ի հետագա բաժիններում ներկայացվող քաղաքականության տարբեր տարբերակների ծախսերի և օգուտների վերլուծության համար: Ելակետային սցենարի նպատակն է բացատրել, թե ինչպես կզարգանա իրավիճակը առանց պետության լրացուցիչ միջամտության: Այլ կերպ ասած՝ դա «առանց լրացուցիչ գործողությունների» սցենարն է: Ելակետային սցենարի նկարագրությունը կարևոր է, որպեսզի հետագայում առաջարկվող տարբերակների ազդեցությունները համեմատվեն ելակետային սցենարի հետ:

3) Ելակետային սցենարի կանխատեսումը պետք է հստակ ցույց տա, թե որքանով է խնդիրը լուրջ, և որքանով այն կդառնա ավելի լուրջ՝ առանց կառավարության միջամտության, և արդյոք հետևանքներն անդառնալի կլինեն: Իրատեսական ելակետային սցենարը պետք է ունենա հստակ փաստական հիմք և հնարավորության դեպքում ունենա քանակական գնահատական:

22. Նպատակների սահմանում

1) ԿԱԳ-ը (ցանկացած միջամտություն) պետք է ունենա հստակ նպատակներ, որոնք ուղղակիորեն կապված են հայտնաբերված/վերհանած խնդիրների լուծման հետ:

2) նախքան խնդրի լուծում առաջարկելն անհրաժեշտ է հստակ ուրվագծել, թե ինչ նպատակների է ցանկանում հասնել կարգավորող մարմինը: Միայն հստակ սահմանված նպատակները թույլ կտան նույնականացնել և համեմատել առաջարկվող գործողությունների տարբերակները և դրանց հավանական ազդեցությունները:

Առանց նպատակների սահմանման հնարավոր չէ բացահայտել հնարավոր այլընտրանքները և օբյեկտիվորեն համեմատել կամ գնահատել, թե որն է առավել

արդյունավետ: Հնարավոր չի լինի նաև հետագայում գնահատել, թե որքանով է գործողությունը հասել նախատեսված արդյունքին.

3) ԿԱԳ-ի շրջանակներում սահմանվում են ընդհանուր, հատուկ և գործառնական նպատակներ: *Ընդհանուր նպատակը* տվյալ կարգավորման/քաղաքականության վերջնական արդյունքն է, որն իրենից ներկայացնում է վերլուծության ենթակա խնդրի լուծումը: *Հատուկ նպատակներն* այն նպատակներն են, որոնք ուղղված են խնդրի պատճառների և (կամ) պատճառներից բխող հետևանքների վերացմանը, իսկ *գործառնական նպատակները* գործողությունների՝ քանակապես և (կամ) որակապես սահմանվող անմիջական արդյունքներն են, որոնք ապահովում են հատուկ նպատակների իրականացումը և մատնանշում այն թիրախային մակարդակներն ու ժամկետները, որոնց պետք է հասնել.

4) նպատակների սահմանումից հետո անհրաժեշտ է սահմանել թիրախներ կամ կատարողական ցուցանիշներ, որոնք պետք է լինեն չափելի:

23. Կարգավորիչ ու ոչ կարգավորիչ գործիքներ և տարբերակներ

1) խնդիրը հստակ պատկերացնելուց և ցանկալի նպատակները սահմանելուց հետո ԿԱԳ-ի վերլուծության հաջորդ փուլը խնդրի լուծմանն ուղղված այլընտրանքների առաջարկումն է: Այս փուլը սովորաբար մեծ ուշադրության է արժանանում շահառուների կողմից: Առաջարկվող տարբերակները պետք է խելամիտ և համաչափ լինեն, այսինքն՝ չհանգեցնեն այնպիսի միջամտության, որն ավելին է, քան անհրաժեշտ է նպատակներին հասնելու համար.

2) միշտ չէ, որ խնդրի լուծման համար պետք է նոր կարգավորում սահմանել: Այս փուլում պետք է դիտարկել նաև ոչ կարգավորիչ գործիքները, քանի որ խնդիրը կարող է լուծվել նաև այնպիսի գործիքների կիրառմամբ, ինչպիսիք են ինքնակարգավորումը,

ապակարգավորումը, կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումները, հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացումը և այլն:

24. Ազդեցությունների վերլուծություն

1) իրավական կարգավորումների մշակման փուլում ազդեցության շատ տեսակներ կարող են «թաքնված» կամ դժվար բացահայտվող լինել: Այդ պատճառով ԿԱԳ-ի միջոցով անհրաժեշտ է պարզել, թե ինչպես և ում վրա իր ազդեցությունը կունենա այս կամ այն միջոցառումը.

2) ԿԱԳ-ի այս փուլն ունի երկու նպատակ. նախ անհրաժեշտ է հասկանալ յուրաքանչյուր այլընտրանքի դրական ու բացասական կողմերը և պարզել արդյոք դրանց օգուտները գերազանցում են ծախսերը՝ երկրպագին սցենարի համեմատ, և երկրորդ՝ այս փուլը հիմք է ստեղծում հնարավոր լուծումների համեմատության համար, որպեսզի հնարավոր լինի խնդրի լուծման այլընտրանքային տարբերակների շարքից ընտրել լավագույնը.

3) ազդեցությունների վերլուծությունը կատարվում է հետևյալ քայլերի միջոցով՝

- հնարավոր զգալի դրական և բացասական ազդեցությունների վերհանում յուրաքանչյուր այլընտրանքային տարբերակի համար (ազդեցություններ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, մրցակցության, փոքր ու միջին ձեռնարկատիրության, միջազգային առևտրի, առողջապահության, շրջակա միջավայրի, պետական բյուջեի, տարածքային զարգացման, աշխատաշուկայի, վարչական ծախսերի վրա և այլն),

- այն խմբերի վերհանում, որոնք կարգավորման արդյունքում կարող են ենթարկվել ազդեցության (օրինակ՝ ձեռնարկություններ, քաղաքացիներ, հանրային կառույցներ և հասարակական կազմակերպություններ և այլն),

- ազդեցությունների քանակական կամ որակական նկարագրություն,

- այլընտրանքային տարբերակների համեմատության մեթոդոլոգիայի որոշում (ծախս-օգուտ վերլուծություն, ծախս-արդյունավետություն վերլուծություն, բազմաչափանիշ

վերլուծություն և այլն): Ազդեցությունների գնահատման մեթոդաբանական յուրաքանչյուր դեպքի համար որոշվում է առանձին՝ կախված խնդրի բարդությունից, փոփոխականների բնույթից կամ առկա տվյալների որակից և քանակից:

25. Կարգավորմամբ պայմանավորված ծախսեր և օգուտներ

1) կարգավորմամբ պայմանավորված կարող են առաջանալ ուղղակի և անուղղակի ծախսեր ու օգուտներ: Ուղղակի ծախսերն ու օգուտներն առաջանում են կարգավորման շրջանակում ընդգրկված կողմերի մոտ՝ պայմանավորված կարգավորման սահմանված պահանջ-պայմաններին համապատասխանության ապահովմամբ: Անուղղակի ծախսերն ու օգուտներն առաջանում են կարգավորման շրջանակում չընդգրկված կողմերի մոտ և հանդիսանում են վարքագծային փոփոխության արդյունք՝ պայմանավորված կարգավորման կիրառմամբ: Դրանք սովորաբար առաջանում են ժամանակի ընթացքում՝ շուկայական, սոցիալական և այլ պայմանների փոփոխության հետևանքով:

2) ԿԱԳ-ի մեթոդաբանության շրջանակում հիմնականում իրականացվում են կարգավորմամբ պայմանավորված ուղղակի ծախսերի ու օգուտների բացահայտում և գնահատում: Դրանք են՝

- ընթացիկ ծախսեր կամ օգուտներ,
- կապիտալ (լրացուցիչ կապիտալ) ծախսեր կամ ծախսերի կրճատումից օգուտներ,
- կարգավորման անարդյունավետության հետևանքով չստացված եկամուտ կամ

դրա կրճատումից օգուտ,

- ոչ դրամական ծախսեր կամ օգուտներ:

26. Տարբերակների համեմատություն (մեթոդներ)

1) ԿԱԳ-ի մեթոդաբանության շրջանակներում կիրառվում են տարբերակների համեմատման հետևյալ վերլուծական մեթոդները՝

- ծախս-օգուտ վերլուծություն. կիրառվում է, երբ տարբերակների բոլոր ծախսերն ու օգուտներն ունեն դրամական արտահայտություն,

- ծախս-արդյունավետություն վերլուծություն. կիրառվում է, երբ տարբերակների ընդհանուր ծախսերն ու օգուտներն ունեն քանակական արտահայտություն, սակայն արտահայտված չեն միևնույն չափման միավորով,

- բազմաչափանիշ վերլուծություն. կիրառվում է, երբ տարբերակների ծախսերն ու օգուտներն ունեն և՛ քանակական (դրամական և (կամ) ոչ դրամական), և՛ որակական արտահայտություն:

27. Իրականացում, մոնիթորինգ և գնահատում

1) վերլուծության այս փուլում իրականացվում է առաջարկի իրագործման պլանավորում (միջոցառումների ծրագիր)՝ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամանակի, ֆինանսավորման աղբյուրների, ենթակառուցվածքների նկատմամբ պահանջների, ձեռնարկների, տեխնիկական փաստաթղթերի մշակման, ուսուցման, գնահատման ցուցանիշների և այլնի պլանավորում.

2) այս փուլում կազմվում է նաև իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո նախատեսվող մոնիտորինգի և գնահատման ծրագիրը, մասնավորապես, երբ է այն կատարվելու, ում կողմից, ինչ տվյալներ են անհրաժեշտ, որ թիրախային ցուցանիշներն են ուսումնասիրվելու և այլն:

28. Տվյալների հավաքագրում

1) ԿԱԳ-ի պատշաճ վերլուծություն կատարելու համար էական տարր է օգտագործվող տվյալների որակը: Տվյալների հավաքագրման գործընթացը ժամանակատար է, ռեսուրսներ սպառող և պահանջում է համակարգային մոտեցում: ԿԱԳ-ի օգտակարությունը կախված է առաջարկվող կամ գործող կարգավորումների ազդեցությունների գնահատման համար

օգտագործված տվյալների որակից, այդ թվում՝ հավաստիությունից և հուսալիությունից, հակառակ դեպքում ճիշտ վերլուծություն հնարավոր չէ իրականացնել:

29. Հանրային քննարկումներ

1) ԿԱԳ-ի համակարգի նպատակներից են նաև պետության կողմից որոշումների ընդունման թափանցիկության ապահովումը և կարգավորման գործընթացին հասարակության մասնակցության ընդլայնումը: Այդ նպատակներին հասնելու միակ ուղին հանրության ներգրավումն է քննարկումներին, հավաստիանալու համար, որ քննարկվող որոշումն իրականում շահեկան է հասարակության համար: Շահառուները պետք է հրավիրվեն մասնակցելու կարգավորման գործընթացի նախաձեռնման նախնական փուլի քննարկումներին, օրինակ՝ կարգավորման անհրաժեշտությունը գնահատող և հետագայում ԿԱԳ-ի փաստաթուղթը մշակող համապատասխան մարմինների կամ աշխատանքային խմբերի քննարկումներին.

Այս ենթատեքստում քննարկումը ենթադրում է երկխոսություն, տեսակետների և ապացույցների ներկայացում՝ նպատակ ունենալով ազդել քաղաքականության ձևավորման վրա, այլ ոչ թե՛ կառավարության կողմից շահառուներին ներկայացնել գուտ տեղեկատվություն կամ պարզաբանումներ.

2) հանրային քննարկումները նաև լավ հնարավորություն են տվյալներ հավաքագրելու և դրանց հավաստիությունն ստուգելու համար:

8. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

30. Հայաստանի Հանրապետությունում առաջարկվում է ներդնել ԿԱԳ-ի ապակենտրոնացված մոդելը, ինչը ենթադրում է, որ քաղաքականություն կամ իրավական ակտ մշակող մարմինները պետք է կազմակերպեն կարգավորման

ազդեցության գնահատումը՝ ոլորտային ազդեցությունների մասով համագործակցելով տվյալ ոլորտի պատասխանատու պետական կառավարման մարմնի հետ, իսկ ԿԱԳ-ի որակի վերահսկողությունն իրականացնելու է Կարգավորման կենտրոնական մարմինը:

31. ԿԱԳ-ի ապակենտրոնացված համակարգի ներդրման այս փուլում առաջարկվում է դիտարկել ներքոնշյալ ոլորտները՝ ազդեցությունների գնահատման տեսանկյունից՝

- 1) գործարար միջավայրի և մրցակցության վրա ազդեցություններ.
- 2) հանրային ֆինանսների վրա ազդեցություններ.
- 3) սոցիալական ոլորտի վրա ազդեցություններ.
- 4) առողջապահական ոլորտի վրա ազդեցություններ.
- 5) շրջակա միջավայրի վրա ազդեցություններ:

32. *ԿԱԳ-ի վերլուծության ենթակա պետք է լինեն կառավարության քննարկմանը ներկայացվող այն իրավական ակտերի նախագծերը, որոնցով սահմանվում են գործարար միջավայրի կամ քաղաքացիների գործունեության վարքագծի կանոններ և (կամ) գործունեության պայմաններ:*

Մյուս կողմից ԿԱԳ-ին ենթակա չեն լինի բյուջեի մասին օրենքի նախագծերը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումները, անհետաձգելի կամ արտակարգ իրավիճակների հետևանքները վերացնող նորմատիվային իրավական ակտերի նախագծերը, տեխնիկական փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերը և այլն: Միննույն ժամանակ ԿԱԳ-ի արդյունավետ համակարգը ենթադրում է նաև պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների կողմից ընդունվող իրավական ակտերի (որոնք էական ազդեցություն կարող են ունենալ գործարար միջավայրի կամ քաղաքացիների վրա) ԿԱԳ-ի իրականացման հնարավորությունը: Այս ուղղությամբ քայլեր կձեռնարկվեն հետագայում, համակարգի զարգացմանը և կայացմանը զուգընթաց:

33. Մինչև իրավական ակտի նախագծի մշակումն իրավասու մարմինը պետք է իրականացնի համապատասխան վերլուծություն, ինչը հիմք կհանդիսանա դիտարկվող խնդրի հնարավոր լուծումներից ընտրելու ամենաարդյունավետը, և արդեն հետո մշակի իրավական ակտի համապատասխան նախագիծ:

34. Իրավական ակտերը կարող են տարբեր խորության ազդեցություններ ունենալ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ կլինի որոշել ԿԱԳ-ի վերլուծության տեսակը՝ պարզեցված կամ խորացված ԿԱԳ վերլուծություն կամ ԿԱԳ վերլուծություն իրականացնելու անհրաժեշտության բացակայություն:

Նախագծերի մշակման նախնական փուլում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը՝

- 1) խնդրի, դրա պատճառահետևանքային կապերի որոշում և սահմանում.
- 2) ներկա իրավիճակի և հնարավոր զարգացումների վերլուծություն.
- 3) խնդրի լուծմանն ուղղված նպատակների սահմանում.
- 4) նպատակների իրականացմանն ուղղված տարբերակի (տարբերակներ)

մշակում:

Վերլուծության արդյունքների և խնդրի վերաբերյալ այնուհետ պետք է կազմվի տեղեկանք և ներկայացվի Կենտրոնական մարմին՝ ԿԱԳ վերլուծության տեսակը (պարզեցված, խորացված կամ ԿԱԳ-ի իրականացման անհրաժեշտության բացակայություն) որոշելու նպատակով:

Պարզեցված ԿԱԳ կհամարվի այն վերլուծությունը, երբ նախնական փուլի արդյունքներով (այդ թվում՝ ոլորտային ազդեցությունների գնահատմամբ) պայմանավորված չի բացահայտվի որևէ զգալի ազդեցություն: Այս դեպքում իրավական ակտ մշակող մարմինը (Կենտրոնական մարմին եզրակացությամբ) կիրականացնի միայն

վարչարական բեռի ավելացման կամ կրճատման հաշվարկ կամ ընդհանրապես իրավական ակտի նախագիծը կհամարվի ԿԱԳ-ի ոչ ենթակա:

35. Ոլորտային ազդեցությունների գնահատման նպատակով, ոլորտի պատասխանատու պետական կառավարման համապատասխան մարմինները պետք է մշակեն և Կարգավորման կենտրոնական մարմնի հետ համաձայնեցնեն ազդեցության զգալիության չափորոշիչների հարցաշարերը:

Օրինակ՝

Ոլորտը	Հարցը	Տարբերակի ազդեցությունը		
		դրական	չեզոք	բացասական
Գործարար միջավայրի և մրցակցության վրա ազդեցություններ	<i>Ազդեցություն՝ նոր բիզնեսների ստաշացման կամ գոյություն ունեցող բիզնեսների փակման տեսանկյունից</i>	Այո/Ո՛չ	Այո/Ո՛չ	Այո/Ո՛չ
	<i>Ազդեցություն՝ բացառիկ իրավունքների սահմանման տեսանկյունից</i>	Այո/Ո՛չ	Այո/Ո՛չ	Այո/Ո՛չ
			

36. Ոլորտային ազդեցությունների գնահատում պետք է իրականացնեն ոլորտի պատասխանատու պետական կառավարման համապատասխան մարմինները:

37. Հարցաշարի հարցերից որևէ մեկին (բացառությամբ չեզոքի) դրական պատասխանելու դեպքում խնդրի լուծման տարբերակները պետք է ենթարկվեն **խորացված ԿԱԳ-ի** վերլուծության: Խորացված ԿԱԳ-ի վերլուծության ժամանակ, ի լրումն նախագծերի մշակման նախնական փուլի ընթացքում կատարված վերլուծական քայլերի, իրականացվում են նաև հետևյալ քայլերը՝

- բացահայտված ազդեցությունների խորացված գնահատում՝ որակական և քանակական,
- միջազգային փորձի ուսումնասիրություն (եթե չի իրականացվել),

- այլընտրանքային տարբերակների առաջադրում (եթե չի իրականացվել),
- առաջադրված տարբերակների ծախսերի և օգուտների խորացված գնահատում,
- լայնամասշտաբ հանրային քննարկումների անցկացում,
- տարբերակների/տարբերակներով առաջարկվող լուծումների կիրարկման,

ինչպես նաև հնարավոր ռիսկերի գնահատում:

38. Այն դեպքերում, երբ գնահատվում է, որ խնդրի լուծումը կարող է ենթադրել տարբեր ոլորտների վրա զգալի ազդեցություն, նախագիծը մշակող մարմինը կարող է ձևավորել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ խորացված ԿԱԳ իրականացնելու նպատակով:

39. ԿԱԳ-ի վերլուծությունների որակի գնահատում ապահովելու նպատակով պարզեցված կամ խորացված ԿԱԳ-ի վերլուծությունները և իրավական ակտի նախագիծը պետք է ներկայացվեն Կարգավորման կենտրոնական մարմին, որի վերաբերյալ վերջինս կկազմի եզրակացություն:

40. Կարգավորման կենտրոնական մարմնի լիազորություններն առաջարկվում է վերապահել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կարգավորման ազդեցության գնահատման վարչությանը, որը, ի թիվս այլ գործառույթների, պետք է իրականացնի՝

- 1) ԿԱԳ-ի մեթոդաբանության մշակման և տեղայնացման աշխատանքներ.
- 2) ԿԱԳ համակարգի թե՛ ներդրման շրջանակներում, և թե՛ ներդրմանը հաջորդող փուլերում ուղեցույցների և ԿԱԳ մեթոդաբանության ձեռնարկների մշակում.
- 3) ԿԱԳ իրականացման բոլոր փուլերի վերաբերյալ դասընթացների կազմակերպում.
- 4) ԿԱԳ-ի վերահսկողություն՝ հանդիսանալով ԿԱԳ իրականացնող մարմիններին ուղղորդող և որակի վերահսկողություն իրականացնող մարմին.

5) ԿԱԳ-ի համակարգի արդյունավետության վերաբերյալ կատարողական ցուցանիշների սահմանում և տարեկան հաշվետվությունների կազմում ու ներկայացում.

6) երկրում քաղաքականության մշակման բարելավման շարունակական գործընթացի վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում:

41. Ինչպես արդեն նշվեց, հանրային քննարկումները ԿԱԳ-ի գործընթացի անբաժանելի մասն են կազմում, կարող են իրականացվել ԿԱԳ-ի վերլուծության ցանկացած փուլում և ուղղակիորեն կապված են կառավարության պետական կառավարման թափանցիկության, մասնակցության և հաշվետվողականության սկզբունքների հետ: Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ գործում է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակ՝ e-draft.am, որը թույլ է տալիս քաղաքացիներին, քաղաքացիական հասարակությանը և բիզնես ոլորտի ներկայացուցիչներին ծանոթանալ տեղադրված իրավական ակտերի նախագծերին, դրանց հիմնավորումներին և այլ կից փաստաթղթերին, ներկայացնել առաջարկություններ, ծանոթանալ նախագծերի առաջարկությունների ամփոփաթեթին, ընդունված առաջարկություններին կամ դրանք չընդունելու հիմնավորումներին: Հաշվի առնելով e-draft.am կայքի գոյության փաստը՝ կարող ենք ԿԱԳ-ի գործընթացում որպես հանրային քննարկումների իրականացման գործիք դիտարկել նաև e-draft.am-ը՝ իրականացնելով համապատասխան ծրագրային փոփոխություններ:

42. ԿԱԳ-ի համակարգի կայուն ներդրման համատեքստում մեծ կարևորություն է տրվում կարողությունների զարգացմանը: Այս տեսանկյունից նախկինում իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում, կարգավորիչ բարեփոխումների շրջանակներում, 2015 թվականից մինչև 2019 թվականը ընկած ժամանակահատվածում «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի,

այնուհետև՝ «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի աշխատողները վերապատրաստվել են միջազգային փորձագետների կողմից և հետագայում, փորձնական ԿԱԳ-ի ներդրման շրջանակներում, իրականացրել են մի շարք դասընթացներ՝ ուղղված քաղաքացիական ծառայողների կարողությունների զարգացմանը:

Համակարգի ներդրման հետագա փուլերում ևս նախատեսվում է շարունակել կարողությունների զարգացման գործընթացը՝ դասընթացների իրականացման, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների մշակման միջոցով: Նախատեսվում է իրականացնել շարունակական դասընթացներ:

43. ԿԱԳ-ի համակարգի սահուն ներդրման նպատակով նախատեսվում է աշխատանքներն իրականացնել փուլային սկզբունքով՝ սկզբնական շրջանում ԿԱԳ-ի ապակենտրոնացված համակարգը ներդնելով միայն մեկ կամ երկու նախարարություններում: Անցումային շրջանում կմշակվեն ազդեցությունների զգալիության չափորոշիչները, կիրականացվեն դասընթացներ իրավական ակտ մշակող քաղաքացիական ծառայողների համար, որոնց ընթացքում վերջիններս կծանոթանան ԿԱԳ-ի մեթոդաբանությանը՝ խնդրի սահմանման, պատճառահետևանքային կապերի բացահայտման, նպատակների, գործիքակազմի և տարբերակների սահմանման եղանակներին, ազդեցությունների գնահատման, ծախս-օգուտ հաշվարկների իրականացման մեթոդաբանությանը, հանրային քննարկումների կազմակերպման եղանակներին, ինչպես նաև կմասնակցեն գործնական դասերի: Կմշակվեն ԿԱԳ-ի մեթոդաբանության ձեռնարկներ և ուղեցույցներ:

Փորձնական փուլի ընթացքում ուսումնասիրության կենթարկվի ապակենտրոնացված ԿԱԳ-ի ներդրման բուն գործընթացը, պարզելու համար, թե ինչ խնդիրներ են ի հայտ գալիս, իսկ հետագա փուլերում ԿԱԳ-ի համակարգի ներդրումը կիրականացվի քաղած փորձի հիման վրա՝ լայնամասշտաբ խնդիրներից խուսափելու նպատակով:

9. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

44. ԿԱԳ-ի համապարփակ համակարգի ներդրումը մեր երկրում թույլ կտա սահմանել իրավական ակտերի մշակման առավել խիստ պահանջներ և որոշումների կայացման կանոնակարգված մոտեցումներ՝ հիմնավորված փաստերով և ծախս-օգուտ հաշվարկներով, նախապես հասկանալ ընդունվող որոշումների ազդեցությունը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում՝ ընդհանուր տնտեսության և դրա առանձին ուղղությունների վրա, ընդլայնել կարգավորման գործընթացին հասարակության մասնակցությունը, նվազեցնել օրենսդրական ճախողումների ի հայտ գալու հավանականությունը և երկրում զարգացնել կարգավորման հաշվետվողականության համակարգ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2019 թվականի
 սեպտեմբերի 26-ի N 1323 - Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ
 ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը/ Համակատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավոր- ման աղբյուրը
1.	ԿԱԳ-ի ապակենտրոնացված համակարգի փորձնական ներդրման նպատակով նախարարության (նախարարությունների) ընտրություն	ԿԱԳ-ի ապակենտրոնացված համակարգի փորձնական ներդրման համար ընտրված առնվազն 1 նախարարություն	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ համապատասխան նախարարություն (նախարարություններ)	31.10.2019թ.	Ֆինանսա- վորում չի պահանջվում:
2.	ԿԱԳ-ի համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում ընտրված նախարարության (նախարարությունների) կարողությունների գնահատում	Գնահատված կարողություններ և անհրաժեշտ վերապատրաստումների շրջանակ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ համապատասխան նախարարություն (նախարարություններ)	29.11.2019թ.	Ֆինանսա- վորում չի պահանջվում:
3.	ԿԱԳ-ի համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում ընտրված նախարարության (նախարարությունների) աշխատողների վերապատրաստում	ԿԱԳ-ի համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում ընտրված համապատասխան նախարարության (նախարարությունների) ԿԱԳ-ի թեմայով վերապատրաստված աշխատողներ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ համապատասխան նախարարություն (նախարարություններ)	02.12.2019թ.-ից շարունակական	Ֆինանսա- վորում չի պահանջվում:
4.	ԿԱԳ-ի ձեռնարկների/ուղեցույց- ների և ազդեցության գնահատման ոլորտային հարցաշար (հարցա- շարերի) մշակում	Մշակված ԿԱԳ-ի ձեռնարկներ/ուղեցույցներ և ազդեցության գնահատման ոլորտային առնվազն մեկ հարցաշար	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ համապատասխան նախարարություն (նախարարություններ)	30.04.2020թ.	Ֆինանսա- վորում չի պահանջվում:
5.	Կարգավորման կենտրոնական մարմնի գործառնությունների իրավական հիմքերի ստեղծում	Կարգավորման կենտրոնական մարմնի հստակ սահմանված գործառնություններ	ՀՀ վարչապետի աշխատակազմ	29.05.2020թ.	Ֆինանսա- վորում չի պահանջվում:

6.	ԿԱԳ-ի համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում նախարարության (նախարարությունների) կողմից իրավական ակտերի մշակում՝ ԿԱԳ-ի ձեռնարկների/ուղեցույցների և ազդեցության գնահատման ոլորտային հարցաշար (հարցաշարերի) կիրառմամբ	ԿԱԳ-ի ընթացակարգերին համապատասխան մշակված առնվազն 4 իրավական ակտեր	Համապատասխան նախարարություն (նախարարություններ)	30.12.2020թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
----	---	--	---	--------------	------------------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ